ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առթիվ

28.05.2020

Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ,
Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի առթիվ:

Թուրքական բանակի դեմ Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում տարած մայիսյան հաղթանակներն Արևելյան Հայաստանը փրկեցին բնաջնջումից: Քանզի բոլորի համար պարզ էր, որ արևելահայության համար նախատեսված էր նույն ճակատագիրը, ինչին արդեն արժանացել էր արևմտահայությունը:

Սակայն այս անգամ չարագործ թշնամին ձախողեց հայության մի ամբողջ սերնդի՝ հայ ռազմիկների, քաղաքական գործիչների, շինականների, հոգևորականների ու մտավորականների միաբռունցք պայքարի արդյունքում: Եվ հենց նրանց հավաքական ուժի շնորհիվ 1918 թվականի մայիսի 28-ը դարձավ մեր ֆիզիկական փրկության և քաղաքական վերածննդի անկյունաքարը:

Այս հաղթանակով հայ ժողովուրդի ամենահերոսական և հաղթական սերունդը վաստակեց հայրենի հողում ապրելու և իր քաղաքական ապագան հարթելու իրավունքը: Իսկ այն, ինչ պատմական հանգամանքների բերումով չհաջողվեց մայիսի 28-ին վերածնված Հայաստանին, պարտավոր ենք իրականացնելու մենք՝ 1991-ի սեպտեմբերի 21-ին ազատության ու անկախության նոր ծնունդ առած Հայաստանի քաղաքացիներս:

Կրկին շնորհավորելով բոլորիս մայիսյան հաղթանակների և Հանրապետության տոնի կապակցությամբ՝ ցանկանում եմ, որ մեր ամենօրյա գործունեությամբ և պատվախնդրությամբ արժանին մատուցենք մեր հաղթանակները կերտած պապերին, հայրերին ու եղբայրներին: Տոնական բարձր տրամադրություն և խաղաղ երկինք եմ մաղթում բոլորիս:

Փառք Հայաստանի առաջին Հանրապետությանը, որ հիմնասյունն է ներկա և ապագա Հայաստանի: